ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

---------- 2016 թվականի N ----------Ն

ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածը և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից էլեկտրոնային տեղեկատվական համակարգի միջոցով անձնական տվյալների փոխանցման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ընդունել սույն որոշմամբ հաստատված կարգի 2-6-րդ կետերում նշված տվյալների փոխանցման ձևաչափը և տեխնիկական պարամետրերը՝ դրանք նախապես համաձայնեցնելով Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի հետ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության

վարչապետ **Կ. Կարապետյան**

----------թ. ----------

Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2016 թվականի
----------ի N ----Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին (այսուհետ՝ հանձնաժողով) էլեկտրոնային տեղեկատվական համակարգի միջոցով անձնական տվյալների փոխանցման հետ կապված հարաբերությունները:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը իր կողմից վարվող «Պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան» և ընտանիքների անապահովության գնահատման

տեղեկատվական բազաներից հանձնաժողովին փոխանցում է տվյալներ քաղաքացիների ստացած կենսաթոշակների, ընտանեկան նպաստ կամ հրատապ օգնություն ստացող ընտանիքների ցուցակների, քաղաքացիների ստացած ընտանեկան նպաստների կամ հրատապ օգնությունների տեսակների և մեծության վերաբերյալ:

3. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունն իր կողմից վարվող շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցամատյանից հանձնաժողովին փոխանցում է տվյալներ շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման վերաբերյալ:

4. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը իր կողմից վարվող «Գյուղատնտեսական տեխնիկայի հաշվառման ռեեստր» տեղեկատվական բազայից հանձնաժողովին փոխանցում է տվյալներ գյուղատնտեսական մեքենայի սեփականատիրոջ, տեսակի և հաշվառման վերաբերյալ:

5. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունն իր կողմից վարվող Հայաստանի Հանրապետությունում հաշվառման ենթակա ինքնագնաց ճանապարհաշինարարական, շինարարական և այլ մեքենամեխանիզմների, երկաթուղային և ջրային տրանսպորտային միջոցների հաշվառման մատյաններից հանձնաժողովին փոխանցում է տվյալներ դրանց սեփականատիրոջ, տեսակի և հաշվառման վերաբերյալ:

6. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն հանձնաժողովին փոխանցում է՝

1) տվյալներ քաղաքացիների ստացած եկամուտների մեծության, վճարողի անվանման կամ ազգանվան, անվան և հայրանվան, հասցեի, ինչպես նաև առևտրային կազմակերպությունների ստացած շահույթի և վճարված շահաբաժինների վերաբերյալ՝ իր կողմից վարվող «հարկատու» տեղեկատվական բազայից.

2) «Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անձնավորված հաշվառման տեղեկատվական բազայում առկա տեղեկությունները:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

7. Սույն կարգում նշված տեղեկատվական բազաներից անձնական տվյալները հանձնաժողովին փոխանցվում են համապատասխան տեղեկատվական համակարգերին (էլեկտրոնային շտեմարաններին) հանձնաժողովի առցանց միանալու և էլեկտրոնային եղանակով համապատասխան տվյալները ներբեռնելու կամ օգտագործելու միջոցով:

8. Տեղեկատվական բազաներից անձնական տվյալները հանձնաժողովին փոխանցվում են անվճար:

Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար **Դ. Հարությունյան**

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից էլեկտրոնային տեղեկատվական համակարգի միջոցով անձնական տվյալների փոխանցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին վերապահված բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց հայտարարագրերի վերլուծության, էթիկայի կանոնների խախտումների, շահերի բախման դեպքերի արձանագրման ու բացահայտման, վարույթների հարուցման գործառույթների իրականացմամբ:

2015 թվականից բարձրաստիճան պաշտոնատար անձանց և նրանց հետ փոխկապակցված անձանց հայտարարագրերը Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) են ներկայացվում էլեկտրոնային եղանակով:

Հայտարարագրերի վերլուծության նպատակով անհրաժեշտություն է առաջանում հայտարարագրերում ներառված տեղեկատվությունը համադրել համապատասխան մարմինների էլեկտրոնային գրանցամատյաններում կամ շտեմարաններում առկա համապատասխան անձնական տվյալների հետ:

ՀՀ կառավարության կողմից սույն գործընթացի կանոնակարգման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի այն դրույթով, որի համաձայն՝ *էլեկտրոնային տեղեկատվական համակարգի միջոցով անձնական տվյալների փոխանցման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:*

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի N 145-Ն որոշմամբ Հանձնաժողովին առցանց եղանակով հասանելի են ՀՀ արդարադատության նախարարության կողմից վարվող իրավաբանական անձանց պետական ռեգիստրի

և քաղաքացիական կացության ակտերի գրանցման, ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության կողմից վարվող բնակչության պետական ռեգիստրի և ճանապարհային ոստիկանության տրանսպորտային միջոցների հաշվառման համակարգի էլեկտրոնային գրանցամատյանների, ինչպես նաև ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից վարվող անշարժ գույքի գրանցամատյանի տվյալները:

Դրա հետ մեկտեղ, ներկայումս Հանձնաժողովը հնարավորություն չունի պարզելու հայտարարագրերի՝ եկամուտներին առնչվող բաժնում եկամտի առանձին տեսակների հետ կապված հայտարարագրված տվյալների արժանահավատությունը և այդ կապակցությամբ բացահայտելու անհամապատասխանություններ, անհամապատասխանության հայտանիշով վերհանել ռիսկեր: Այդ նպատակով առաջարկվում է Հանձնաժողովին ապահովել հասանելիություն համապատասխան ռեեստրներին՝ քաղաքացիների ստացած կենսաթոշակների տեսակների, մեծության, ընտանեկան նպաստ կամ հրատապ օգնություն ստացող ընտանիքների ցուցակների, քաղաքացիների ստացած ընտանեկան նպաստների կամ հրատապ օգնությունների տեսակների, մեծության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով: Հայտարարագրերի՝ թանկարժեք գույքին և եկամուտներին առնչվող բաժնում արտացոլված տվյալների արժանահավատությունը պարզելուն, ինչպես նաև հայտարարատուի պարտավորությունների ծավալը հստակեցնելուն կնպաստի նաև շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների հետ կապված տեղեկատվությանը հասանելիությունը, ինչի կապակցությամբ առաջարկվում է Հանձնաժողովին հասանելի դարձնել շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների հետ կապված տեղեկատվությանը:

Միաժամանակ, առ այսօր Հանձնաժողովը հնարավորություն չունի գյուղատնտեսական մեքենաների, տրանսպորտային միջոցների վերաբերյալ հայտարարագրերում առկա տեղեկատվությունը համադրել համապատասխան մարմինների էլեկտրոնային գրանցամատյաններում կամ շտեմարաններում առկա համապատասխան տվյալների հետ: Այդ նպատակով առաջարկվում է Հանձնաժողովին ապահովել հասանելիություն համապատասխան ռեեստրներին՝ գյուղատնտեսական մեքենայի, մեքենամեխանիզմի, տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ, տեսակի և հաշվառման վերաբերյալ տվյալներ ստանալու նպատակով:

Առաջարկվում է նաև ապահովել Հանձնաժողովի հասանելիությունը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից վարվող «հարկատու» տեղեկատվական բազային՝ քաղաքացիների ստացած եկամուտների մեծության, վճարողի անվանման կամ ազգանվան, անվան և հայրանվան, հասցեի, առևտրային կազմակերպությունների ստացած շահույթի և վճարված շահաբաժինների վերաբերյալ տվյալներ ստանալու նպատակով, ինչպես նաև Հանձնաժողովին հասանելի դարձնել «Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անձնավորված հաշվառման տեղեկատվական բազայում առկա տեղեկությունները:

3. Ոլորտային քաղաքականությունը

Հայաստանում կոռուպցիայի կանխարգելում, բարձրաստիճան պաշտոնատար անձանց շահերի բախմանն առնչվող գործընթացում կոռուպցիոն ռիսկերի նվազեցում, բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց հայտարարագրման համակարգի հավաստիության ու հրապարակայնության բարձրացում: Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց հայտարարագրման համակարգի էլեկրոնայնացում, հայտարարագրերի առցանց ստացում, դրանցում ներառված տվյալների հիման վրա ռիսկային չափորոշիչներով վերլուծությունների իրականացում, ձևավորված բազայից հրապարակման ենթակա տվյալների դուրսբերում և հրապարակում:

Վերոնշյալ քաղաքականությունը ներառված է Համաշխարհային բանկի օժանդակությամբ իրականացվող «Պետական հատվածի արդիականացում» ծրագրում և ապահովված է համապատասխան ֆինանսական միջոցներով:

4. Կարգավորման նպատակը և բնույթը

Նախագծի ընդունման նպատակը բարձրաստիճան պաշտոնատար անձանց և նրանց հետ փոխկապակցված անձանց հայտարարագրերի համապատասխան բաժիններում արտացոլված տվյալների արժանահավատության ստուգումն է, անհամապատասխանությունների բացահայտումը և անհամապատասխանության հայտանիշով՝ ռիսկերի վերհանումը:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի կողմից:

6. Ակնկալվող արդյունքը

«Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից էլեկտրոնային տեղեկատվական համակարգի միջոցով անձնական տվյալների փոխանցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման արդյունքում Հանձնաժողովը հնարավորություն կունենա էլեկտրոնային առցանց եղանակով՝

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տեղեկատվական բազաներից ստացված տվյալների հիման վրա իրականացնելու գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց հայտարարագրերի՝ եկամուտներին առնչվող բաժնի վերլուծություն.
- ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ գյուղատնտեսության նախարարության և ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության տեղեկատվական բազաների տվյալների հիման վրա իրականացնելու տվյալների համադրում գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց հայտարարագրերի՝ շարժական գույքին առնչվող բաժնի տվյալների հետ.
- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից վարվող «հարկատու» տեղեկատվական բազայից, ինչպես նաև անձնավորված հաշվառման տեղեկատվական բազայից ստացված տեղեկությունների հիման վրա իրականացնելու գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց հայտարարագրերի՝ եկամուտներին առնչվող բաժնի վերլուծություն:

Արդյունքում՝ կբարձրանա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրերի վերլուծության արդյունավետությունը՝ հայտարարագրերի վերլուծության գործընթացում հնարավոր կդառնա պարզել դրանցում արտացոլված համապատասխան տվյալների արժանահավատությունը, այդ կապակցությամբ բացահայտել անհամապատասխանություններ և անհամապատասխանության հայտանիշով՝ վերհանել ռիսկեր, ինչպես նաև առավել վերահսկելի դարձնել շահերի բախման իրավիճակները: